ՄԱՆՐ ԳԻՏԵԼԻՔ ԵՒ ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

Լ՝ենգրայի Կենդանաբանական պարտէզը։ — Այս փակարանը շատ ճոխ է կենդանեօք, և Եւրոպայի ամենէն երևելիներէն մէկը կը սեպուի։ 1,069 քառաձեռնի կենդանի կայ մէջը, 1,409 մսակեր, 1,025 կրծող, 204 թանձրամորթ, 1,098 որոճող, 219 պարկաւոր, 1,861 սողուն և 7,320 թռչուն. ընդ ամենը՝ 14,205 կենդանի։ Ասոնց հազիւ թէ տասը մասին մէկը գտուած է. բոլոր մէկալ մնացածները ընծայ են. մասնաւորապէս թագուհին իր հարկատու կամ դաշնակից իշխաններէն իրեն խաւրուած առիւծները, ընձառիւծները, վագրերն և ուրիշ կենդանիներն ընծայ ըրած է կենդանաբանական ընկերութեան։

Այս անգղիական ընկերութիւնը Եւրոպայի ուրիշ կենդանաբանական ընկերութեանց հետ փոխնորդ ալ ընելով կը հարատացնէ իր փակարանը։ Սակաւագիւտ կենդանիները միայն կը գտնուին, որոնք շատ սուղի կը նստին. օրինակի համար՝ առաջին ռնգեղջիւրը 25,000 ֆրանգի գնեցին. չորս ընձուղտի համար 17,500 ֆր. վճարեցին, և նոյնչափ ծախք եղաւ անոնց փոխադրութեանն համար. էգ փիղ մը հանդերձ իրեն ձագովը՝ 20,000 ֆր. գնեցին 1851ին. և 25,000 ֆր. ծախք եղաւ ընծայ տրուած ձիագետին Լոնտրա փոխադրելու և բնակութիւն պատրաստելու համար իրեն։ Բարեբաղդաբար նոյն տարին պարտէզն առջի տարուընկէն 250,000 ֆր. աւելի եկամուտ ունեցաւ։ Ալբերտ առիւծը 3,500 ֆր. գնուեցաւ, և 1852ին վագր մը 5,000 ֆր.։ Սև վզով ջուխտ մը կարապի համար ընկերութիւնը 80 լիրա սդեռլին վճարեց. 60 լ. սդ. ջուխտ մը մալացի աղաւնիներու և զոյգ մը կատարաւոր աղաւնիներու համար. 350 լ. սդ. Վիկտորիա ըսուած աղաւնիներու զոյգի մը, և 70 լ. սդ. չորս հատ Չինաստանի բադի համար։

Մսակեր կենդանիները կերակրելու համար եղած ծախքը՝ 1854 տարուոյն 34,200 ֆր. հասեր էր։ Նոյն տարուան պարտիզին հաշուեգրքէն կ՝իմացուի թէ որչափ զանազան տեսակ ուտելիքներ կը տրուին կենդանիներուն և թէ ինչ է անոնց ծախքը։ Չոր խոտին հաշիւն է 912 լ. սդ. ցորենին ու հունտերուն գացեր է 700 լ. սդ. հացին և կապիկներուն համար շինուած խմորեղէններուն՝ 150 լ. սդ. հաւկիթի՝ 87 լ. սդ. կաթի՝ 69 լ. սդ. գերմասատի [1], ատեպղնի ու շաղգամի՝ 22 լ. սդ. չոր ըսուած հացին՝, որ կը ծառայէ արջերուն, գայլերուն և շուներուն, 135 լ. սդ. ծովու հորթերուն, ջրային սամոյրներուն [2], հաւալուսանց [3], և այլն, կերած ձկներուն՝ 214 լ. սդ. թարմ խոտին՝ 33 լ. սդ. օձերուն տրուած ճագարներուն և աղաւնիներուն՝ 33 լ. սդ. բրնձի ու ձէթով շինուած խմորեղէններու՝ 66 լ. սդ. և 157 լ. սդ. ալ պղպէղ, տունկերու, մարախի, օձի, որդի, ալիւրի, թուղթ, շաքարի, և այլն, որոնք գլխաւորապէս թռչնոց կը ծառայեն. այս ամէն ծախքերուն բովանդակութիւնն է գրեթէ 98,000 ֆրանգ։

Ասիէ-բաշխման երևոյթը։ — Առաջիկայ տարուոյս յուլիսի 21ին առաւօտն, ըստ Նորոց, երկնային երևոյթ մը պիտի տեսնուի, որ շատ սակաւաւոր է աստեղաբաշխական գիտութեան տարեգրաց մէջ. այսինքն է մեր արևային դրութեան ամենէն պայծառ երկու մոլորակներն, Արուսեակ և Լուսնթագ, իրարու հետ պիտի ընդորդին այնպիսի մերձաւորութեամբ՝ որ աղեւսակաց պզտի սիալ մը կրնայ անոնց վրայ խաւարումն կամ շշափումն պատճառել։

Ըստ հաշուի անգղիական Նաւաղղման Տարեցոյցին [1], առերևոյթ ընդորդութիւնը պիտի հանդիպի Կոստանդնուպոլիս 21 յուլիսի առաւօտեան ժամ 5, րոպէ 42, մանրերկրորդ 59, ըստ միջական ժամանակի։ Նոյն պահուն այս երկու մոլորակաց երկրակեդրոնական առերևոյթ երկայնութիւնը պիտի ըլլայ, լուսոյ շեղմամբն ուղղելով, 99° 17′ 36″.7, և երկրակեդրոնական առերևոյթ լայնութեանց տարբերութիւնը՝ 34″.0, որով Արուսեկին կեդրոնը քիչ մը դէպ՝ի հարաւ պիտի գտուի քան զկեդրոնն Լուսնթագի։

Այս երկու մոլորակաց մեծագոյն մերձաւորութիւնը պիտի ըլլայ ժամ 5, րոպէ 43, մանրերկրորդ 40, և կեդրոնից փոքրագոյն առերևոյթ հեռաւորութիւնը 33″.9, որմէ հանելով Արուսեկի ու Լուսնթագի կիսատրամագծից բովանդակութիւնն, որ հաւասար է առ 20″.2, երկու սպառուածներուն մէջ պզտի հեռաւորութիւն մը կը մնայ 13″.7։

Երբ այս երևոյթս կը հանդիպի արևն ելլելէն քիչ մը ետև, կարելի է դիտել զայն միջակ դիտակներով, ուր այս մոլորակները գտուելով 18° 31′ անկիւնական հեռաւորութեամբ արևէն, կրնան պարզ աչքով ալ տեսանելի ըլլալ նաև ցորեկ ատեն։

Լոմայագրոց [2] խարդախութեան դէմ հնարք։ — Լուսագրութեան արուեստին հնարուելէն ետև՝ լուսայագրոց, փոխանակագրոց, վաւերագրոց, և այլն, խարդախութիւնները շատ դիւրացան, վասն զի անով ճիշդ կը նմանցուին այս թղթերուն վրայ եղած գրերն ու նշանները։ Այս վտանգիս վրայ Ամերիկա մտածուեցաւ, ուր վաճառականութեան թղթերը բազմաթիւ կը շրջաբերին, և ճէորճ Մաթեւս անունով բնալոյծ մը, որ Մոնրէալի սեղանաւորութեան պաշտօնեայ է, տեսակ մը կանաչագոյն թուղթ հնարեց, քրոմի կանաչով գունաւորած, որուն վրայ կը տպուի գիրն ածխոյ հասարակ սև թանաքով։ Այս թանաքս

1 ՏՃ. Թիւրմիս։
2 ՏՃ. Սոս սէմմարս։
3 ՏՃ. Բաճամ։

1 Անգլ. Nautical Almanac.
2 ՏՃ. Գայմէ։

տպաւորուելով ենթակային վրայ՝ բոլորովին անեղծանելի կը մնայ և կ'ընդդիմանայ ամենայն հակազդողաց. բաց ասկէ անկարելի է լուսագրութեամբ նմանն առնուլ, վասն զի իր կանաչ ենթակայն յատկութիւն ունի խառնուելու գրերուն սևին հետ՝ ստուերատան պատկերին մէջ և բորակացեալ թղթոյն վրայ, և ելածը միագոյն կ'ելլայ։ Գանատա այս տեսակ տոմսակներ միայն կը շրջաբերին հիմա։

Գաղղիոյ բնակչաց աճումը։ — Դարէ մը 'ի վեր Գաղղիոյ բազմամարդութիւնը խիստ զգալի կերպով աւելնալու վրայ է. ինչպէս որ հետևեալ ցուցակին մէջ կը տեսնուի։

1762 տարուոյն	. .	21,769,163 բն.
1788	. . .	24,676,000
1806	. . .	29,107,425
1820	. . .	30,451,187
1831	. . .	32,560,954
1836	. . .	33,540,910
1841	. . .	34,230,178
1846	. . .	35,401,761
1851	. . .	35,781,627
1856	. . .	36,039,364

Բարիզու բնակչաց թիւն 1801 ամին։ — Նորագոյն քննութիւններէ կը տեսնուի որ Բարիզու բնակչաց թիւն 1801 տարուընէ ինչուան հիմա քան զկրկնապատիկն աւելցեր է։

Ցամին 1801 ըստ Ընդհանուր Վիճակագրութեան Գաղղիոյ, Բարիզու բնակչաց թիւն էր 547,756. իսկ 1817ին եղած աշխարհահամարին էր 713,956։ Սկսեալ 1826 տարիէն ամէն հինգ տարին մէյ մը մայրաքաղաքիս բնակչաց աշխարհահամար մը կ'ըլլուի, և իւրաքանչիւր անգամուն եղած թիւերն են ինչուան 1856,

1826	. . .	890,905
1831	. . .	774,338
1836	. . .	909,126
1841	. . .	935,261
1846	. . .	1,053,997
1851	. . .	1,053,262
1856	. . .	1,130,488

Օդալու Ճանապարհորդութիւն։ — Ամերիկացի մը, Ճոն Լըմաունդէն անուն, ամենայն կերպով կ'աշխատի և կ'աշխատեցընէ մեծ ծախիւք օդապարիկ գունտ մը պատրաստելու, որով կ'ուզէ այս ամառ ատլանդեան ովկիանոսն անցնիլ ու Եւրոպա գալ։ Ինքն սկսի պիտի առաջ փորձերն Ամերիկոյ լճերուն վրայ ընելու, և ետքէն այս վտանգաւոր Ճանապարհորդութեանս ձեռք զարնելու։ Եթէ նոր Իկարոսի մը բաղդը չունենայ, անմահական անուն պիտի թողու։

Նոր հերակլէս մը։

Անգղիացի վարձուոր երկրագործ մը մարմնոյ կրթութեանց մէջ շատ աջողակ էր և արտաքոյ կարգի ուժ ունէր։ Շատ մարդ կու գային ասոր հետ ուժերնին փորձելու, և ամենուն ետ կը դառնային. օր մ' ալ հեռու տեղէ մէկն եկաւ ասոր հետ մրցելու համար, և խմանալով որ տան առջևի ցանկապատ անդաստանին մէջ կ'աշխատի, վար իջաւ ձիէն, ու անոր գանձէն բռնած գնաց դառաւ այս հերակլէսը. հոն կապեց ձին, ու դարձաւ ըսաւ մարդուն. "Բարեկամ, կորընձուութեդ անունը շատ լսեր եմ, անոր համար քառասուն մը դոն հեռաւորութենէ եկայ որ զքեզ տեսնեմ և փորձեմ մէյ մը որ մէջերնէս ո՞րը առաջ կը բնայ գիմացինը գետին զարնել,,։ Վարձուորը պատասխան տալու տեղ՝ շուտով մը անոր մէջքէն բռնեց և առաւ ցանկին վրայէն քովի անդաստանին մէջ նետեց. ետքը հանգարտաբար ու պաղարիւնով մը բահը նորէն ձեռքն առաւ, ու սկսաւ գետինը փորել։ Երբոր ողորմելին ոտքի վրայ ելաւ ասդին անդին ցաւցուցած, հերակլէսը հարցուց անոր. "Է՛ ուրիշ բան ալ ըսելիք ունիս նայինք։ — Կ'ապաչեմ որ գոնէ ձիս ալ ասդին նետես,,։

Կոպակոպար մը։

Բարեմիտ գեղացի մը սաստիկ ծանր հիւանդանալով, կանչեց քովը իր կնիկը, ու անոր առջևը իր կտակն ըրաւ. "Կ'ուզէի քեզի բան մը ձգել այսչափ տարի մէկտեղ սիրով ապրելնուս համար։ Գիտես որ բոլոր բոլոր ձի մը ու շուն մը ունիմ. ձին կ'երթաս կը ծախես, ու անոր տակն ազգականներուս կու տաս. իսկ շունս քեզի ըլլայ, որովհետև շատ ծառայութիւն կրնայ ընել քեզի,,։ Կնիկը խօսք տուաւ երկանն որ ըսածն ընէ. և անոր մահուընէն վերջը՝ օր մը եկաւ շունն ու ձին առած վաճառականոցը գնաց։ — "Քանիով կը ծախես ձին, հարցուց իրեն վաճառական մը։ — Սա շան հետ մէկտեղ ծախել կ'ուզեմ ձիս, պատասխանեց կինը. թէ որ յիսուն ֆրանգ շանս ու հինգ ֆրանգ ձիուն կու տաս, տէր ես անոնց, առ գնա,,։ Վաճառականը զարմացաւ մնաց ու չէր կրնար ըմբռնել թէ ինչ խաղ կար բանին տակը. բայց մտածելով որ շահաւոր կ'ելլար ձին իրեն, ուզած տակը տուաւ ու շունն ալ գնեց։ Կնիկն ալ իրեն խղճմտանքը հանգարտեցընելու համար որ երկանը կտակը կատարեց, գնաց հինգ ֆրանգը անոր ազգականներուն ձեռքը տուաւ, և շան տակը իրեն պահեց։

ՎԵՆԵՏԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՒ